

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>


Մելանյա Բալայան

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ  
ԳՈՐԾՎԱԾՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

КОЛЛЕКЦИЯ ТКАНЕЙ  
АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ИСТОРИКО-КРАЕВЕДЧЕСКОГО МУЗЕЯ



TEXTILE COLLECTION  
OF ARTSAKH STATE MUSEUM  
OF HISTORY AND COUNTRY STUDY



*Մելանյա Բալայան*

---

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ  
ԳՈՐԾՎԱԾՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

•

ԳՈՐԳԵՐ  
ԿԱՐՊԵՏՆԵՐ  
ԱՆԿՈՂՆԱՊԱՐԿԵՐ  
ԽՈՒՐՋԻՆՆԵՐ  
ԱՂԻ ՏՈՊՐԱԿՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2011

*Меланья Балаян*

---

**КОЛЛЕКЦИЯ ТКАНЕЙ**  
**АРЦАХСКОГО**  
**ГОСУДАРСТВЕННОГО**  
**ИСТОРИКО-КРАЕВЕДЧЕСКОГО**  
**МУЗЕЯ**



КОВРЫ  
КАРПЕТЫ  
ХУРДЖИНЫ  
МАФРАШИ



ЕРЕВАН 2011

*Melanya Balayan*

---

**TEXTILE COLLECTION**  
**OF ARTSAKH STATE MUSEUM**  
**OF HISTORY AND COUNTRY**  
**STUDY**



RUGS  
CARPETS  
KHORJINS  
MAFRASHES



YEREVAN 2011

**Գիրքը տպագրության է երաշխավորել Ար ՊՀ գիտական խորհուրդը**

ՀՏԴ 06 (479.25)

ԳՄԴ 79.18

Բ 200

*Գիտական խմբագիր՝ Աշխունջ Պողոսյան  
պատմ. գիտ. թեկնածու*

*Ռուսերեն և անգլերեն թարգմանությունը՝ Գայանե Գրիգորյանի*

Բալայան Մելանյա

Բ 200 Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն/  
Մ. Բալայան.— Եր.: Ջանգակ-97, 2012.— 128 էջ:

ՀՏԴ 06 (479.25)

ԳՄԴ 79.18

ISBN 978-99941-1-972-1

© Բալայան Մ., 2012

© «Ջանգակ-97» հրատ., 2012



այ և օտար հնագույն աղբյուրները միանշանակորեն վկայում են, որ Արցախը Մեծ Հայքի մեջ է ներառված եղել վաղագույն ժամանակներից ի վեր: Նկարագրելով Մեծ Հայքի սահմանները, հույն և հռոմեացի պատմիչները միաժամանակ վկայում են, որ Հայաստանի արևելյան սահմանները անցնում են Կուր գետով: Սույնը փաստող լավագույն վավերագրերից է Ներոնի ժամանակներից Հռոմում պատի վրա փորագրված աշխարհի մարմարե քարտեզը, որում Արցախը դիտվում էր որպես Հայոց պետության նահանգներից մեկը: Այս իրողությունը արձանագրել է նաև Ք.ա.1-ին և Ք.հ.1-ին դարի հույն աշխարհագրագետ Ստրաբոնը նշելով, որ Կուր գետը, հոսելով Հայաստանի հյուսիսային սահմանով, նրանից բաժանում է Աղվանքը, միաժամանակ վկայելով, որ «Օրխիստենան» /Արցախը/ և Շակաշենը /Ուտիքը/ Հայաստանի նահանգներ են: Ստրաբոնի վկայությունները հաստատվում են նաև տարբեր ժամանակների հայկական աղբյուրներով: Այսպես, 5-րդ դարին վերագրվող հանրահայտ «Աշխարհացոյցի» համաձայն Արցախը Մեծ Հայքի 10-րդ նահանգն էր և ուներ 12 գավառներ: Իսկ պատմահայր Մովսես Խորենացին, ներկայացնելով հայ ժողովրդի և հայկական առանձին նահանգների ու նրանց անվանումների ծագումնաբանությունը, բարեբախտաբար մանրամասնորեն շարադրել է նաև Կուրի և Արաքսի միջև ընկած տարածքում հայոց ավանդական նախնի՝ Հայկի թոռ Սիսակի ժառանգներից Առանին կողմնակալ նշանակելու փաստը, դրանով իսկ ժառանգություն հաստատելով «գղաշուն Աղուանից և գլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ» տարածք, որի սահմանները սույն հաղորդման համաձայն կազմում էին հյուսիսում՝ Կուր գետը, հյուսիս-արևմուտքում՝ Հնարակերտ ամրոցը, հարավ-արևելքում Արաքս գետը, իսկ արևմուտքում՝ Սյունիքի հետ շփման գիծը՝ Արցախյան և Սևանի լեռները: Այն իրենից ներկայացնում էր մի եռանկյունի, որն ընդգրկում էր Արցախ և Ուտիք նահանգները:

Պատմական, այդ թվում և հնագիտական փաստերը հաստատվում են նաև մարդաբանական տվյալներով: Վ.Բունակը իր հայտնի «Կովկասի բնակչության ազգաբանական կազմը» հայտնի աշխատության մեջ, բազմաթիվ աղբյուրների համադրության արդյունքում եզրակացրել է, որ Արցախի հայերը հանդիսանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող «արմենոիդ» մարդաբանական տիպի ամենացայտուն ներկայացուցիչները:<sup>1</sup> Իսկ գերմանացի է.Ռյուպերի կողմից Արցախի տարածքում հայտնաբերած հնագիտական հավաքածուի ուսումնասիրման արդյունքում հայտնի հնագետ Ռ.Վիրխովը գրել է. «Բնորոշ

<sup>1</sup> В. В. Бунак, Антропологический состав населения Кавказа, Вестник гос. Музея Грузии, т. 13 А, 1946, стр. 94.



ու վերին աստիճանի կարևորը ընդհանուր տիպն է, իսկ մինչև այժմ կատարված սակավաթիվ պեղումներն անգամ ցույց են տալիս, որ Գուգարքից մինչև Թարթառ գետի դաշտը ապրած ազգերը մի կուլտուրայի ներկայացուցիչներ էին»<sup>2</sup>: Հնագետ Ա.Իսրայելյանը իր հերթին, մասնագիտական մանրկրկիտ հետազոտությունների շնորհիվ, որոնք վերաբերում են հատկապես բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարաններին ու նրանցում պահպանված նյութերին, վկայել է, որ հայկական լեռնաշխարհի, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի տարածքում ապրող ցեղերի հավատալիքներն ու ծիսակատարությունները նույնատիպ էին<sup>3</sup>:

Այսպիսով, մեր կողմից հիշատակված ու նաև չհիշատակված, սակայն հրապարակի վրա առկա բազմաթիվ փաստերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում, այդ թվում և Արցախում հնագույն ժամանակներից ի վեր ապրել են հնդեվրոպական ծագում ունեցող հայ ժողովրդի նախնիները, որոնք էլ ստեղծել են յուրօրինակ մշակույթ, որի առանցքային մաս է կազմում նաև կիրառական արվեստը: Այս բնագավառի մի առանձին հետաքրքրություն ներկայացնող ձյուղերից է գորգագործությունը, որը լայն տարածում է ունեցել նաև Արցախում հնագույն ժամանակներից ի վեր: Այդ մասին բավական պատկերավոր վկայություն է հաղորդել 7-րդ դարի պատմագիր Մովսես Կաղանկատվացին: Պատմագիրը, նկարագրելով Աղվանից Ջիվանջի իշխանի ողբերգական մահը, որ տեղի է ունեցել 683 թվականին Հայ Աղվանից, տվյալ ժամանակներում իշխանանիստ, Պարտավ քաղաքում Արցախի իշխանագույններից մեկի ձեռքով, նշում է նաև, որ Ջիվանջիի զինվորները հետապնդում են նրան ու հասնելով Արցախի նրա հայրենի ապարանքը, թալանում են այն, իրենց հետ տանելով «մետաքսահյուս ու կերպաս դիպակները, գույնզգույն կապերտները, ոսկին ու արծաթը, ընտրելագույն կահույքն ու սպասեղենը»<sup>4</sup>:

Մ.Կաղանկատվացու հիշյալ վկայությունը ուշագրավ է և կարևորվում է նաև մեկ այլ տեսանկյունից: Գորգագործության բնագավառի գրեթե բոլոր ուսումնասիրողները այն տեսակետն են արտահայտել, որ հայկական «կարպետ» անվանը առաջինը հանդիպում են հայկական աղբյուրներում և այն էլ «կապերտ» տարբերակով: Նրանք միաժամանակ, որպես աղբյուր, մատնանշում են 5-րդ դարում հայերեն թարգմանված «Աստվածաշունչը»: Փաստորեն նույն «կապերտ» ձևով արդեն երկրորդ հիշատակությունը հանդիպում ենք նաև երկու դար հետո՝ 7-րդ դարում Մ.Կաղանկատվացու մոտ: Պատմագրի հիշատակած «գույնզգույն կապերտները» արտահայտությունից կարելի է նաև եզրակացնել, որ «կապերտները» արդեն իսկ լայն տարածում ունեին 7-րդ դարում նաև Արցախում ու Ռուսիքում:

«Կապերտ» բառը, ըստ հետազոտողների, առաջացել է «կապ» բառից, որի պատճառով էլ սկզբնական շրջանում գործածական է եղել հենց «կապերտ» տարբերակը, մի իրողություն, որ ևս փաստվում է Մ.Կաղանկատվացու հաղորդմամբ: Իսկ հետագայում առավել լայն հնչեղություն է ստացել «կարպետ» տարբերակը, որն էլ փոխանցվել է նաև եվրոպական լեզուներին:

13-րդ դարի հայ մատենագիրներից Կիրակոս Գանձակեցին յուրահատուկ հիացմունքով է նկարագրել հայ կնոջ ձեռքի աշխատանքն ընդհանրապես, այն անվանելով «ոստայնանկության իմաստություն և նկարակերտության հանձար»<sup>5</sup>: Ի դեպ, պատմագրի այս գնահատականը վերաբերում է հենց Արցախի ձեռագործ արվեստին: Նկարագրելով Արցախի Հաթերքի Վախթանգ իշխանի կողմից Գետիկի հռչակավոր եկեղեցու կառուցման փաստը, միաժամանակ վկայել է, որ նույն Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը «... իր դուստրերի

<sup>2</sup> Ռ. Վիրխով, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Ազգագրական հանդես», 1895, էջ 66:

<sup>3</sup> Ա. Իսրայելյան, Կուլտուրան և հավատալիքները Հայաստանում ուշ բրոնզի դարաշրջանում, Եր., 1976, էջ 36:

<sup>4</sup> Մ.Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969թ., էջ175:

<sup>5</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Եր., 1982, էջ 157:





հետ պատրաստեց գեղեցիկ վարագույր, սուրբ խորանի ծածկույթ, որ հիացնում էր տեսնողներին. պատրաստված էր այծերի շատ փափուկ աղվամազից, ներկված էր պես-պես ու գույնզգույն, գործված էր քանդակաձև...»:<sup>6</sup>

Արցախի հայ կանանց վարպետությունն ու բարձր ձաշակը մատնանշող բազմաթիվ հիշատակություններ են պահպանվել նաև ժողովրդական բանավոր ավանդազրույցներում ու հեքիաթներում: Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթը, որի հերոսներն են արցախահայության կողմից շատ սիրված Անահիտը և Վաչագանը, վկայում է Արցախում ընդհանրապես արհեստների ու, մասնավորապես, ձեռագործության խոր արմատների մասին: Արցախի գեղատեսիլ բնակավայրերից մեկի՝ Հացի գյուղի նախապանի աղջկան՝ Անահիտին սիրահարվել էր Հայ Աղվանից Վաչագան թագավորը, որը սակայն մերժողական պատասխան է ստանում այն պատճառով, որ չէր տիրապետում որևէ արհեստի: «Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա, թե ծառա լինի, թե տեր, թե թագավոր և թե իշխա», - եզրակացնում է մեծանուն գորղն իր վերոնշյալ հեքիաթում: Եվ ժողովրդի կողմից սիրված արքան սովորում է «դիպակ» գործելու արհեստը:

Պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերվել են հնագույն ժամանակներին վերաբերող կարպետների մասեր, որոնց վրա առկա են տարբեր պատկերներ: Արցախի տարածքում հայտնաբերվել են նաև հնագույն գորգագործական գործիքներ՝ կտուտիչներ, որոնք պատրաստված են ոսկորից և վկայում են ընդհանրապես Հայաստանում և մասնավորապես նաև Արցախում նույնպես մանածագործության ու հատկապես գորգագործության, վաղագույն ժամանակներից ի վեր, գոյության մասին: Հնագետների կարծիքով այդ կտուտիչները պատկանում են Ք.ա. 2-1-ին հազարամյակներին:

Միջնադարից սկսած գորգագործությունը թևակոխել է միանգամայն նոր փուլ, որն աչքի է ընկնում թե իր կատարման որակով և թե զարդանախշերի բազմազանությամբ ու կատարելությամբ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ պահպանված հայկական վիմագրերում գորգի մասին առ այսօր ամենավաղ հիշատակությունը կրկին հանդիպում է հենց Հայոց արևելից կողմերում: Մասնավորապես նախկինում Հայոց արևելից կողմանց Ոստիք նահանգի մեջ ներառված Տավուշ գավառի /Մեծ Հայքի Ոստիք նահանգի Տավուշ գավառի մեծ մասը, ներառյալ թուրքերի կողմից «Թոուզ» վերանվանված հին հայկական Տաուշ բնակավայրը, ներկայումս բռնազավթված է Ադրբեջանի կողմից-Մ.Բ./ Կապտավանք եկեղեցու 1242-43թթ. վիմական արձանագրության մեջ հիշատակություն կա «գորգ»-ի մասին: Որոշ հետազոտողների կարծիքով այն «գորգ» անվանման առաջին հիշատակությունն է:<sup>7</sup> Տեղին է նշել նաև, որ քաղաքական հանգամանքների բերումով հատկապես 5-րդ դարից սկսած հին հայկական Արցախ և Ոստիք նահանգները գրեթե միավորված են հանդես գալիս, որի համար հիմնական պատճառներ են հանդիսացել քաղաքական, կրոնական ու էթնիկական գործոնները:

Գորգագործության մեջ օգտագործվել է ոչխարի բուրդ, այծի փափուկ մազ, բամբակ, թանկարժեք գորգերում՝ նաև մետաքսաթել: Թել ներկելու համար օգտագործվել են հիմնականում բուսական ներկեր՝ տորոն, դեղնածաղիկ, ընկույզի և տխի կեղև, անանուխի արմատներ, թերթաքարեր և ընդհանրապես ամենատարբեր բույսեր, որոնք ամրացվել են հանքային նյութերով /շիբ, կիր/: Ք.ա. 5-րդ դարի հույն պատմիչ Հերոդոտոսը գրում է, որ Կովկասի բնակիչները բույսերը ստացված ներկերով ներկում էին բուրդը, որից հետո նրանից գործում տարբեր գործվածքներ, որոնց գույնը երբեք չի խամրում, ոչ ժամանակի ըն-

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Հ.Հակոբյան, Արցախի միջնադարյան արվեստը, Եր., 1991, էջ 21:



թացքում և ոչ էլ ջրից:<sup>8</sup> Հնագույն, վաղ միջնադարյան ու միջնադարյան բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ միջազգային առևտրում Հայաստանը հայտնի էր հատկապես ներկերով, որոնց մեջ առաջնակարգ տեղը գրավում էր «որդան կարմիր» ներկը: Այն ամենալայն կիրառությունն է ունեցել նաև գորգագործության մեջ:

301թ. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո խաչի խորհրդանշանը ընդհանուր առմամբ լայն տարածումն էր ստացել հայ միջնադարյան մշակույթի բոլոր բնագավառներում՝ քանդակագործության, մանրանկարչության, տարբեր զարդարանքների, ձեռագործության և գորգագործության մեջ, ինչը ևս վկայություն է հայերի շրջանում քրիստոնեական հավատքի ամրապնդման ու տարածման մասին: Սակայն «աղբբեջանցի» անունով ներկայացող թուրք «մասնագետները» այստեղ էլ կանգ չեն առնում իրենց «նվաճողական» ծրագրերի առջև և, խեղաթյուրելով իրականությունը, բնիկ հայ ժողովրդի բազում դարերի ընթացքում ստեղծած և իր հիմքով քրիստոնեական մշակույթի մի մասը ոչնչացնելուց, իսկ մյուս մասը «սեփականաշնորհելուց» հետո, ամեն կերպ փորձում են Արցախում և Ուտիքում քրիստոնյա հայերի գործած գորգերն ու կարպետները ևս «սեփականաշնորհել»: Այս իմաստով ուղղակի հակազիտական և, ընդհանրապես, թյուրիմացություն պետք է համարել Լ. Քյարիմովի «Азербайджанский ковер» բազմահատոր ու ստավարածավալ աշխատությունը: Աշխատությունը ոչ միայն գորգագործական-մշակութաբանական տեսանկյունից է թյուրիմացություն, այլև պատմաքաղաքական:

Աշխատության երկրորդ հատորում, մեջբերումներ կատարելով անգլիացի հայտնի արևելագետներ Կ.Վիլսոնի և Ա. Պոպի, ընդ որում Թեհրանում հրատարակված, աշխատություններից<sup>9</sup>, որոնցում հեղինակները խոսում են իրանական բարձրարժեք նյութական մշակույթի մասին, միանգամայն անհասկանալիորեն Լ. Քերիմովը դրանք ներկայացնում է որպես ներկայիս Աղբբեջանի ժողովրդի մշակույթը: Սակայն իրանական բրոնզեդարյան մշակույթը թե ի՞նչ կապ ունի միայն 15-րդ դարից հետո իրանի Ատրպատականի տարածքում հայտնված աղկոյունլու և կարակոյունլու թուրքմենական ծագմամբ ցեղերի հետ, որոնք միայն 1918 թվականից սկսեցին իրենք իրենց անվանել աղբբեջանցի, բոլորովին անհիմն ու անհասկանալի է: Ի դեպ, ներկայացնելով աղկոյունլու և կարակոյունլու միջինասիական թուրքական ծագում ունեցող ցեղերի 15-րդ դարում իրանում հայտնվելու և իրենց տիրապետությունը հաստատելու ժամանակաշրջանը, Լ. Քերիմովը անթաքույց ուրախությամբ նշում է, որ «... սկզբում կարակոյունլուների, իսկ հետո աղկոյունլուների կառավարման շրջանում մեծ ծաղկում է ապրել աղբբեջանական մշակույթը և այդ շրջանում երկրի մայրաքաղաքը եղել է Թավրիզը»:<sup>10</sup> Եվ ընդհանրապես, գրքի շարադրանքի նշված հատվածում մեծամասամբ նկարագրված է իրանի մշակույթը, բայց անհասկանալիորեն վերագրված «աղբբեջանականին»:

Պատմության այդ աստիճան խեղաթյուրման շնորհիվ թուրք հեղինակը մի կողմից սեփականաշնորհում է իրանի պատմությունը և մշակույթը, իսկ մյուս կողմից, սիրահոժար օգտվելով հայ մատենագիրների երկերից, նույնը վարվում նաև հայկական մշակույթի հետ: Այսպես, աշխատության նույն երկրորդ հատորում, օգտվելով հայ պատմագիր Սեբեոսի հաղորդած տեղեկություններից, որոնք վերաբերում են 628թ. Բյուզանդիայի կայսր Հերակլի Գանձակ կատարած արշավանքին ու այստեղից տարած գորգերին, չգիտես ի՞նչ հիմքով, այնուհետև եզրակացություններ է կատարում, ավելացնելով, որ «արաբները անընդհատ

<sup>8</sup> Геродот, Книга 1, глава 203, русский перевод Мищенко, Москва, 1888, т. 1, стр. 106.

<sup>9</sup> Л. Керимов, Азербайджанский ковер, т. 2, Гянджлик Баку, 1983, стр. 10.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 26:



արշավանքներ կատարելով Ադրբեջանի վրա, իրենց հետ տանում էին մեծ թվով ընտիր գորգեր ու գործվածքներ»:<sup>11</sup> Սերեոսի պատմության մեջ «Ադրբեջան» տերմինը չի գործածված, փոխարենը անշուշտ, «Ատրպատական» տեղանունն է հիշատակված, իսկ ակնհայտ փաստ է, որ Ատրպատականը Պարսկաստանի վարչական խոշոր միավորներից է եղել: Ինչ վերաբերում է Գանձակից տարված գորգերին, ապա գուտ հայաբնակ Գանձակ քաղաքից տարվել են հայկական գորգեր ու գործվածքներ: Նույն ձևով է վերաբերվում նաև Մ.Կաղանկատվացու վերոնշյալ աշխատության հետ: Պատմական կարևոր նշանակության երկում, որ բնականաբար գրված է գրաբար հայերենով, ընդհանրապես գոյություն չունի «Ադրբեջան» տերմինը՝ միանգամայն հասկանալի պատճառով: Իսկ այնուհետև իր աշխատության մյուս հատվածներում թուրք «արվեստագետը» ջանք ու եռանդ չի խնայել անգամ հայատառ գրություններով ու քրիստոնեական խորհրդանշաններով և, բնականաբար, հայ կանանց ձեռքով գործած գորգերը նույնպես ներկայացնելու «ադրբեջանական»:

Ամերիկացի հայտնի կոլլեկցիոներ և գորգագործության բնագավառի նշանավոր գիտակ Ջիմ Ալլենը բարձր է գնահատել հայկական գորգերը և ընդհանրապես հայկական գորգագործությունը, միաժամանակ շեշտելով կովկասում հնագույն ժամանակներից ի վեր այդ բնագավառում հայերի ունեցած մեծագույն դերը:<sup>12</sup>

Հայ ժողովրդի կենցաղում գորգագործության լայն տարածման և նրա, որպես ամենասիրված արհեստի, մասին վկայություն է թողել նաև Ամենայն Հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսը/1735թ./: Խորը կսկիծով նկարագրելով, որ թուրքերը կոտորեցին մեծ թվով հայերի ու թալանեցին նրանց ողջ ունեցվածքը, Հայոց կաթողիկոսը միաժամանակ վկայում է, որ կենդանի մնացած հայերը բայց և այնպես այնուհետև էլ շարունակեցին զբաղվել իրենց սիրած արհեստով, ինչպիսինն էր գորգագործությունը:

Ըստ հայկական գորգագործության խորագիտակ ուսումնասիրողներից Վ.Թեմուրձյանի, Հյուսիսային Արցախի Բանանց գյուղում է գործվել հիշատակագրություն ունեցող հայկական հնագույն գորգերից մեկը: Գորգի վրա կատարված արձանագրության մի մասը խուճացած և անընթեռնելի է, բայց և պահպանված մասը վկայում է, որ գորգը գործվել է ի հիշատակ Հռիփսիմեին Կիրակոս Բանանցեցու կողմից և թվագրված 1202:<sup>13</sup> Այն արցախյան «եռախորան» տիպին պատկանող գորգ է՝ հետաքրքիր գունային երանգներով ու անցումներով և ներկայումս պահպանվում է Վիեննայի արդյունաբերության պատմության թանգարանում: Նրա մասին մեզ հայտնի առաջին հրատարակողը համարվում հայտնի արևելագետ Ալոիզ Ռիզլը/1895թ./:<sup>14</sup>

Երուսաղեմի Ս.Հակոբի եկեղեցում է պահվում Գանձասարի Հայ Աղվանից Ներսես կաթողիկոսի պատվերով 1731թ. Արցախի Ջրաբերդ գավառի Չարեքի վանքում գործված և հայերեն «յիշեցեք մաքրափայլ յաղոթս ձեր Ներսես մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատձառ սմին /արված/ լոյս ընկալ Չարեքու սբ անապատին ՌձՁ թվին»<sup>15</sup> հիշատակագրություն ունեցող գորգը:

<sup>11</sup> А.Керимов, Азербайджанский ковер, т. 2, стр. 14-16.

<sup>12</sup> «the important role Armenians have played in rug culture and more specifically in Caucasian rug weaving through the ages». Jim Allen, Armenian Rugs Without Inscriptions, <http://www.kunstpedia.com/articles/66/1/Armenian-Rugs-Without-Inscriptions/Page1.html>

<sup>13</sup> Վ.Ս.Թեմուրձյան, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955, էջ 67:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>15</sup> Տես՝ Ս.Գավթյան, Դրվագներ միջնադարյան Հայաստանի կիրառական արվեստի պատմության, Եր., 1977, էջ 128-129:



19-րդ դարի երկրորդ կեսերից և հատկապես 20-րդ դարի սկզբներից հայ ժողովրդի շրջանում վերստին նոր վերելք ապրեց գորգագործությունը և համաշխարհային շուկայում դարձավ ամենաեկամտաբեր ու մեծ պահանջարկ վայելող ապրանքներից մեկը, ինչն էլ իր հերթին նպաստեց հայկական գորգերի լայնամասշտաբ տարածմանը:

Տարբեր ուսումնասիրողներ եկել են այն եզրակացության, որ ամենագեղեցիկ կարպետներն ու գորգերը հանդիպում են Արցախում, Զանգեզուրում և Հայաստանի լեռնային մյուս շրջաններում: Ընդհանրության մեջ կարելի է նշել, որ հայկական ծագման գորգերը աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ հյուսվածքով, գործվածքի խտությամբ, խավի բարձրությամբ ու ողորկությամբ և, իհարկե, նաև ոճական առանձնահատկություններով: Դա նախ և առաջ դրսևորվում է գունային համադրությունների ու անցումների մեջ: Գեղեցիկ ձևավորումներով կատարված պատկերներն այնքան իմաստնություն ու բազմազանություն են պարունակում, որ կարծես լուսավորում են շրջապատը, միաժամանակ թափանցելով մարդու ներաշխարհի՝ ստեղծելով հեքիաթային տրամադրություն: Հայ կնոջ կողմից գրեթե բոլոր ժամանակներում գորգերում արտացոլված ու ամենասիրված պատկերներից է կյանքի ու բնության հավերժությունը խորհրդանշող «կյանքի ծառը», որով նա ավանդում էր սերունդներին իր հոգու ցանկություններն ու երազանքները: Դա միաժամանակ վկայություն է անգամ ամենաձանր վիճակում հայտնված ժողովրդի անսահման լավատեսության, հույսի ու հավերժության գաղափարի առկայության մասին:

Աղբյուրները վկայում են, որ հատկապես Շուշի գավառում բավական զարգացած էր գորգագործությունը, իսկ Շուշիում նույնիսկ բացվել էր հատուկ դպրոց՝ գորգագործական արհեստը բարձր մակարդակով ուսուցանելու նպատակով: Երվանդ Լալայանը գրում է, որ Շուշիում «թեև առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չուլ և այլն»:<sup>16</sup> Ազգագրագետի վկայությամբ բուրդ գգող, թել մանող և կարպետագործ կնոջ օրավարձը 19-րդ դարի վերջերին կազմում էր 10-20 կոպեկ:<sup>17</sup> Պարզապես կարելի է նշել, որ գորգագործությունը արցախցի կնոջ սիրած արհեստն է եղել, իսկ գորգը կամ կարպետը՝ յուրաքանչյուր հայ ընտանիքի կենցաղի կարևոր մաս: Կատարման որակով և զարդանկարի բարդությամբ ձեռագործ գորգերը անգերազանցելի են, այդ պատճառով էլ նրանց արժեքը միշտ էլ բարձր է եղել: Այդ է պատճառը, որ գորգարվեստի գիտակները գորգագործական մշակույթը իրավամբ համարում են հայ բազմադարյան մշակույթի և ազգային ժառանգության կարևորագույն մաս:

Սակայն այդ ամենով հանդերձ, ստիպված ենք ցավով արձանագրել, որ հայ ժողովրդին, այդ թվում և արցախահայությանը պարտադրված քաղաքական պատմությունը ոչ միայն նպաստավոր չի եղել, այլև լեցուն է եղել քաղաքական արհավիրքներով՝ այլադավանների արշավանքներով, սպանություններով ու թալանով, որի արդյունքում մեր ժողովուրդը գրկվել է բազում դարերի ընթացքում իր իսկ ստեղծած հոգևոր ու նյութական ժառանգությունից: 1921թ. խորհրդային Աղբյուրներին բռնակցվելուց հետո Արցախում շարունակվել է մշակութային թալանն ու շարդը: Լ.Ղ.Խ-ում, ինչպես նաև քաղաքական նկատառումներով հայկական ինքնավար մարզից դուրս թողնված պատմական Արցախ և Ուտիք նահանգների, այսինքն Լեռնային ու դաշտային Ղարաբաղի հայկական գյուղերում պահպանված ձեռագործ գորգերը հավաքագրելու նպատակով Բաքվից հատուկ հրահանգներով ուղարկ-

<sup>16</sup> Երվանդ Լալայան, «Ազգագրական հանդես», Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 96:

<sup>17</sup> Նույն տեղում:



ված առանձին գործակալներ շրջել են Ղարաբաղի զուտ հայկական բոլոր գյուղերն ու բնակչությունից հավաքել հին ձեռագործ գորգերը՝ դրանց դիմաց հանձնելով իրենց գորգագործարաններում արտադրած «նոր» գորգեր: Նման «փոխանակությունը» ավելի ձիշտ խաբեության և թալանի ակնհայտ դրսևորում էր: Հենց այդպիսի քաղաքականության շնորհիվ էլ այսօր Բաքվում ստեղծվել է գորգի թանգարան, որով ներկայանում են աշխարհին, որպես թե հին մշակույթ ունեցող ժողովուրդ, իսկ Արցախում, որտեղ եթե մինչև 1920-ական թվականները գրեթե ամեն ընտանիքում առկա էր առնվազն մեկ, իսկ շատ դեպքերում մեկից ավելի ձեռագործ գորգեր, կարպետներ, ապա ներկա դրությամբ անգամ կան բնակավայրեր, որտեղ այլևս գոյություն չունի թեկուզև որևէ մեկ նմուշ: Այնպես որ պահպանվածը ստեղծածին համեմատ աննշան է, բայց և չափազանց արժեքավոր: Ներկա դրությամբ աշխարհի տարբեր երկրներում առանձին անհատ-հավաքողների /»կոլեկցիոներներ»/ ու թանգարանների հավաքածուներում ոչ միայն պարզապես ընդգրկված են, այլև իրենց արժանվույն տեղն ունեն նաև արցախյան ձեռագործ գորգերն ու կարպետները:

Թանգարանի ազգագրության բաժնում տեղակայված են 19-րդ դարին պատկանող գորգագործական դազգահ և գործիքներ, որոնց հարևանությամբ ցուցադրված են նաև հիմնականում 19-րդ դարի Արցախյան ձեռագործ գորգեր, խուրջիներ, մաֆրաշներ /անկողնապարկ/, աղամաններ: Ի դեպ, Արցախի գյուղերում մինչև 1960-ական թվականները տնային գորգագործությունը դեռևս առկա էր, սակայն ավելի շատ գործում էին ձեռագործ կարպետներ, ընդ որում տեղական բուրդը տակավին ներկելով հիմնականում բուսական ներկերով: Տնային պայմաններում արհեստավորները պատրաստում էին պարզունակ կառուցվածքով գորգագործական դազգահներ, որոնք միանգամայն տարբեր չափեր ունեին: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում պահվող գորգագործական դազգահը պատրաստված է նախանշված ձևով 19-րդ դարի սկզբներին: Առավել մեծ գորգերի կամ կարպետների համար պատրաստվում էին համեմատաբար մեծ չափերի դազգահներ:

Թանգարանի ազգագրության բաժնում տեղակայված են 19-րդ դարին պատկանող գորգագործական դազգահ և գործիքներ, որոնց հարևանությամբ ցուցադրված են նաև հիմնականում 19-րդ դարի Արցախյան ձեռագործ գորգեր, խուրջիներ, մաֆրաշներ /անկողնապարկ/, աղամաններ: Ի դեպ, Արցախի գյուղերում մինչև 1960-ական թվականները տնային գորգագործությունը դեռևս առկա էր, սակայն ավելի շատ գործում էին ձեռագործ կարպետներ, ընդ որում տեղական բուրդը տակավին ներկելով հիմնականում բուսական ներկերով: Տնային պայմաններում արհեստավորները պատրաստում էին պարզունակ կառուցվածքով գորգագործական դազգահներ, որոնք միանգամայն տարբեր չափեր ունեին: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում պահվող գորգագործական դազգահը պատրաստված է նախանշված ձևով 19-րդ դարի սկզբներին: Առավել մեծ գորգերի կամ կարպետների համար պատրաստվում էին համեմատաբար մեծ չափերի դազգահներ:

Բոլոր ժամանակներում գորգագործությամբ բացառապես զբաղվել են հայ կանայք: Զարդանախշերի համար հատուկ գծագրեր գոյություն չունեին: Զարդանախշերը հիմնականում կանանց ստեղծագործ մտքի ու ձաշակի արդյունք էին հանդիսանում, որոնք փոխանցվում էին սերնդից սերունդ: Բայց և միաժամանակ այդ փոխանցումները կատարվում էին առավել կատարելագործվելով և նոր որակներ հաղորդվելով: Հմուտ գորգագործների մոտ շատ դեպքերում զարդանախշերը ծնվում էին հենց դազգահի առաջ՝ աշխատանքի ընթացքում: Երբեմն զարդանախշերի ընտրության վրա որոշակի ազդեցություն են ունեցել նաև ձեռքի տակ եղած թելերի գունային երանգները: Դրանք հատկապես կարևոր էին դաշտի գունա-



յին ընտրության հարցում: Արցախի ոչ միայն տարբեր բնակավայրերում գործված գորգերն են իրարից տարբերվում, այլև նույն բնակավայրում տարբեր գորգագործների գործածները: Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ գարդանախշերի ընդհանուր տիպը պահպանելով հանդերձ, յուրաքանչյուր, հատկապես հմուտ գորգագործ, իր նորամուծություններն ու մտահղացումներն է արտացոլել, որի արդյունքում ստեղծվել են նույն խմբին պատկանող, բայց և գարդանախշերի բազմազանություն և բազմերանգություն ունեցող գորգեր:

Գորգագործության բնորոշ կողմերից էր նաև չափազանց մեծ պատասխանատվությունը գործվածքի որակի, գարդանախշերի համաչափության, պատկերների գեղեցիկ ու հնարավորինս ձիշտ արտացոլման հանդեպ: Տարածված է եղել նաև միևնույն գարդանախշը գորգի տարբեր մասերում տարբեր գույներով արտացոլելը: Դա հատկապես վերաբերում է մի քանի վարդյակներ պարունակող գորգերին: Սակայն գույների թե ընտրությունը և թե անցումները նույնպես կատարվել են բարձր ձաշակով:

Մեծ չափերի գորգերի ու կարպետների գործելը պահանջում էր ֆիզիկական մեծ աշխատանք, որի պատճառով էլ այն իրականացվում էր կանանց որոշակի խմբի կողմից: Երբեմն գորգերի երկարությունը նույնիսկ անցնում էր 5-6 մետրից և այս դեպքում առանձանակի կարևորություն էր ստանում նաև ծայրերի ամրությունն ու հավասարությունը: Գորգերի բնորոշ կողմերից ու առանձնահատկություններից է նաև գործվածքի խտությունը: Արցախյան գորգերի միջին խտությունը 10 սմ<sup>2</sup> -ի վրա սովորաբար կազմել է 30-40 հանգույց:

Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության հուշադրամների վրա պատկերված է նաև արցախյան գորգ, ինչը վկայություն է կիրառական այս արվեստի նկատմամբ բոլոր ժամանակներում մեր ժողովրդի ունեցած անսահման սիրո ու մեծարանքի:

Արցախյան գորգերի ու կարպետների որակական յուրահատկություններից մեկը հատկապես տեղական բրդի մշակման արդյունքում ստացված թելի ողորկությունն ու նրբությունն էր, ինչը երբեմն մետաքսաթելի տպավորություն է թողնում: Բուրդը մանրակրկիտ մշակություն էր անցնում, սկսած լվացումից, այնուհետև հատուկ գործիքով /գզրիչ/ այն ուղղվում ու փափկացվում էր, որից հետո իլիկով ու ձախարակով մանվում: Մանված թելի ներկման պրոցեսը նույնպես ուշադրության հատուկ առարկա էր, քանի որ ներկերի ընտրությունը, ամրությունը, փայլը ևս չափազանց կարևոր դեր ուներ գործվածքի որակի ու գեղեցկության համար: Որոշ ուսումնասիրողների կարծիքով արցախյան գորգերը նաև աչքի են ընկնում առավելապես արտահայտիչ գունային երանգներով, որի պատճառը հավանաբար այն է, որ Արցախում բոլոր ժամանակներում առավել նախընտրելի են եղել վառ, բայց միևնույն ժամանակ հանգստություն ու խաղաղ տրամադրություն հաղորդող գույները:

Արցախյան գորգերին բնորոշ են նաև բուսական ու կենդանական յուրօրինակ ոճավորումներով պատկերների բազմազանությունն ու միաժամանակ դրանց ներդաշնակությունը: Հատուկ տեղ ունեն հատկապես երկրաչափական ձևավորումներով գորգերը:

Արցախյան գորգերի ամենատարածված տեսակներից են «Օձագորգերը»: Մասնագիտական շրջանակներում դրանք հայտնի են որպես «խնձորեսկ» անունով վիշապագորգեր: Այս խմբի գորգերը աչքի են ընկնում իրենց յուրահատկություններով, ուշագրավ են գարդանախշերի համադրությամբ ու նրանց հաղորդած բովանդակությամբ. կենտրոնում արիական խորհրդանշանն է՝ կեռխաչը կամ սվաստիկան, որից ելնում են օձերը և դրանք հիմնականում թվով ութն են: Ի դեպ, Վահրամ Թաթևյանը իր «Արցախի տոհմագորգերը» գրքում հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, նշելով, որ 1960-ական թվականներին իր շրջագայության ժամանակ Արցախի գյուղերից մեկում հանդիպել է օձագորգի և այն լուսն-



կարելու թույլատրությունը մեծ դժվարությամբ է ստացել այն պատճառաբանությամբ, որ սվաստիկայի նշանի համար կարող են մեղադրել «կոմունիստները»: Հեղինակին հայտնել են նաև, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին այդ տիպի գորգերի մի մասը ուղղակի ոչնչացվել են:<sup>18</sup> Սակայն առավելապես ընդունված է այն տեսակետը, որ քառանկյան մեջ ներառված կեռխաչը խորհրդանշում է աշխարհաստեղծումը, իսկ նրա շուրջը տարածվող ութ օձերը պահպանում են նրան: Գորգագետների կարծիքով կեռխաչի խորհրդանշանով գորգերը առավել տարածում են ունեցել հենց Արցախում, ինչպես նաև Ռուսիքում, Գուգարքում և Սյունիքում: Միաժամանակ հատկանշական է այն հանգամանքը, որ օձի խորհրդանշանը առկա է նաև կիրառական արվեստի այլ ձյուղերում և այն էլ հատկապես նախաքրիստոնեական ժամանակներում: Հայտնի է նաև, որ հայ իրականության մեջ հնագույն ժամանակներից օձը դիտվում էր որպես իմաստնության խորհուրդ և բրոնզե, արծաթե ու ոսկե օձակերպ մատանիները, ապարանջաններն ու այլազան գարդարանքները առանձնահատուկ ու լայն կիրառություն ունեին: Սա ևս մեկ վկայություն է գորգագործության և կիրառական արվեստի մյուս ձյուղերի միջև սերտ կապերի առկայության մասին:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Արցախյան «արծվագորգերը»: Ըստ պատմական աղբյուրների, դեռևս Արտաշեսյան հայկական թագավորական դինաստիայի /Ք.ա. 2-1-ին դդ./ ժամանակներից արծիվը խորհրդանշում էր հզորության գաղափարը: Այսօր էլ արցախյան «արծվագորգերը» համընդհանուր մեծ հիացմունքի աղբյուր և արժեք են ներկայացնում: Ըստ էության կարելի է միանշանակորեն եզրակացնել, որ դրանք արցախյան գորգագործության թերևս ամենադասական տիպն են ներկայացնում: «Արծվագորգերը» հայտնի են նաև «արևագորգ» անունով, որի պատճառով հետազոտողները նաև այն կարծիքն են հայտնել, որ արծիվը մարմնավորում էր նաև արևը, ինչն էլ կապված է նախաքրիստոնեական շրջանում հայերի մոտ շատ տարածված արևի պաշտամունքի հետ:

Հանրահայտ փաստ է, որ Հայաստանը հանդիսանում է վիշապագորգերի հայրենիքը: Գորգի այս տեսակը աչքի է ընկնում բովանդակային հարուստ բազմազանությամբ: Վիշապի արտացոլումը գորգերի վրա բացատրվում է նրանով, որ հնում վիշապը ոչ թե մարմնավորում էր չար ուժերին, այլ ավելի շատ ուժ և հզորություն էր արտահայտում ու դրանով փորձում էին հակադրվել չար ուժերին՝ վտարելով նրանց իրենց օջախներից: Արցախում գործված վիշապագորգերը իրենց հերթին ունեն յուրահատկություններ, որոնցից կարելի է նշել վիշապների պատկերումը մի քանի գլխանի և բազմատանի պատկերներով:

Հին ժամանակներում մարդկանց մոտ տիրապետող էր այն գաղափարը, որ պաշտամունքային տարբեր խորհրդանշաններով գորգերը հաջողություն ու բարորություն են բերում, այդ պատճառով դրանք կախում էին տան պատին, ընդ որում ամենագլխավոր մասում: Նաև նրա վրա կախում էին զենքեր, իսկ ավելի նոր ժամանակներում նաև նախնիների նկարները: Վերոնշյալ գորգերը հատակին փռելը սրբապղծություն էր համարվում: Տարեց արցախցիներից շատերը վկայում են նաև, որ նախկինում ընտանեկան գորգը արգելվում էր գերդաստանից հանելը, որովհետև այն կարող էր դժբախտություն բերել: Սա ևս միանշանակորեն վկայում է, որ գորգերը նաև պաշտամունքի տարրեր են պարունակել իրենց մեջ թե նախաքրիստոնեական և թե հետագա ժամանակներում: Պատահական չէ, որ դրանք մեծ կիրառություն են ստացել նաև հենց եկեղեցում: Այն հանգամանքը, որ քրիստոնեական հավատքն իր արտացոլումն է գտել նաև գորգագործության մեջ, վառ վկայություն է այն փաստը, որ հայկական գորգերի մեծ մասում առկա են խաչի ամենատարբեր ձևավորում-

<sup>18</sup> Վ.Թաթևյան, Արցախի տոհմագորգերը, Եր., 2004, ժողովրդական վիշապագորգերի «խնձորեսկ» խումբ, 90:



ներով պատկերները, ինչպես նաև հայկական «Տ» տառը, որ նշանակում է «Տեր», այսինքն «Աստված»: Հատկապես այս վերջինը հանդիպում է հայկական գրեթե բոլոր գորգերում ու նաև կարպետներում և ևս մեկ վկայություն է այն մասին, որ հայ գորգագործները դրանով ցանկացել են արտացոլել իրենց հայկական ծագումն ու քրիստոնեկան հավատքը: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգի հավաքածուի մեջ մեծ թիվ են կազմում պաշտամունքային, այդ թվում և քրիստոնեկան տարբեր խորհրդանշաններով գորգերը, որոնց տարածված տեսակներից են «խաչագորգերը» և «խորանավոր» գորգերը:

Զարդանախշերի մեջ գերակշռող են նաև աստղերի, մարդկային փոքրամասշտաբ կերպարների, տարաբնույթ թռչունների ու կենդանիների խորհրդավոր պատկերներն ու դրանց հետքերի համադրությունները: Գորգագետների կարծիքով թերևս հենց հայկական գորգերը մահմեդականների գործած գորգերց տարբերվում են հատկապես նրանով, որ նրանցում բոլոր պատկերները՝ աստծո, արևի, աստղերի, մարդկանց, վիշապի, կենդանիների, թռչունների և այլն, արտացոլված են խորհրդանշանների ձևով: Այս երևույթը չափազանց ակնառու է նաև արցախյան գորգերում:

Մեծ թիվ են կազմում նաև հայերեն հիշատակագրություն ունեցող գորգերն ու կարպետները, որոնք ամենավաղ վկայությունն են դրանց հայկական ծագման մասին: Որպես կանոն գործվում էր գործելու թիվը և գորգագործի անունը, իսկ որոշ դեպքերում արտացոլվում էր գորգի հասցեատիրոջ անունը: Վերջիններս հիմնականում այն գորգերն են, որոնք գործվել են որպես նվեր կամ հիշատակ: Հաճախ այդպիսի հիշատակագրությունները կատարվում էին համառոտ, նշելով միայն անուն-ազգանվան առաջին տառերը:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործի հավաքածուի մեջ ընդգրկված են նաև կարպետներ, ձեռագործ անկողնապարկեր /մաֆրաշ/, աղամաններ, վարագույր, խուրջիներ, ձիու չոլ և այլն: Արցախյան ձեռագործ կարպետները նույնպես ունեն յուրահատկություններ և, ի տարբերություն գորգերի, ներկայումս ավելի մեծ թվով են պահպանված: Դրանք կրում են ամենազանազան ու հարուստ զարդանախշեր՝ հետաքրքիր գունային անցումներով ու երանգներով: Ընդհանրապես կենցաղում կարպետները ամենալայն ու ամենատարբեր կիրառություն են ունեցել, ինչով էլ մեծապես պայմանավորված են թե նրանց չափերը և թե զարդանախշային ձևավորումները: Կարպետները հիմնականում նախատեսվում էին հատակին փռելու համար, իսկ առանձնակի հարուստ զարդանախշերով կարպետները նաև կախում էին պատերին, ծածկում անկողինները և այլն: Վերջինները հիմնականում փոքր չափերի կարպետներ էին:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ասեղնագործ կարպետները, որոնք ներկա դրությամբ շատ քիչ են այլևս հանդիպում: Դրանք աչքի են ընկնում իրենց յուրահատուկ գեղեցկությամբ ու առավել նուրբ են, քանի որ գործված են միայն հատուկ մշակված և մեծամասամբ բամբակյա կամ մետաքսե թելերով:

Լայն տարածում են ունեցել նաև անկողնապարկերը /արաբերեն՝ մաֆրաշ/, խուրջիները, պարկերը /ցորենի և գարու համար նախատեսված/, աղաքսակները /հատուկ աղը պահելու համար/, պայուսակները կամ ոսապարկերը, մեզարները և այլն: Առանձնակի հետքերություն են ներկայացնում ասեղնագործ անկողնապարկերն ու խուրջիները, որոնք բնորոշվում են զարդանախշերի գեղարվեստական յուրահատուկ ոճավորմամբ ու արտակարգ հարստությամբ:

Ազգային անկախ պետականության հաստատումից հետո Արցախում նոր վերածնունդ է ապրել գորգագործությունը: Ստեղծվել են գորգագործական նոր ֆաբրիկաներ, որոնց հիմնական նպատակն է վերականգնել հայկական գորգագործական արվեստին բնորոշ ավանդույթները:





Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործի հավաքածուի մեջ ընդգրկված ձեռագործ գորգերի ու կարպետների թիվը մեծ չէ՝ ընդամենը 125 հատ: Սակայն դրանք բազմազան ու բազմատիպ են և ներկայացնում են Արցախին բնորոշ գորգերի գրեթե բոլոր տիպերը՝ «Արծվագորգ», «Ջրաբերդ», «Գետաշեն», «Թագ», «Օձագորգ», «Խաչխորան», «Վիշապագորգ», «Ցլագորգ», «Ղարաբաղ» և այլն: Դժբախտաբար ներկա դրությամբ թանգարանում պահպանված ամենահին գորգը վերագրվում է 18-րդ դարի վերջին: Գորգը, թեև ունի հնամաշ ու կիսված է երկու մասի, բայց պահպանված են գարդանախշերն ու գունային երանգները: Կոնկրետ թվագրություն ունեցող ամենահին գորգը վերաբերում է 1818թ.: Ընդհանրապես թանգարանի գորգերի հիմնական մասը 19-րդ դարին են պատկանում: Դրանք ձեռք են բերվել գնումների ու նվիրատվությունների միջոցով: Հարկ է ընդգծել նաև, որ խորհրդային ողջ ժամանակաընթացքում թանգարանի գորգերի հավաքածուն իրենից ներկայացնում էր ընդամենը թվով 10 ձեռագործ գորգ, իսկ մնացածը առանձին հորեյանական տարելիցների կապակցությամբ գործված ժամանակակից գորգեր էին: Թանգարանի ներկայիս գորգերի հավաքածուի հիմնական մասը ձեռք են բերվել Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախության հռչակումից հետո, մի գործընթաց, որ այսօր էլ շարունակվում է: Սակայն ներկա դրությամբ արցախյան ձեռագործ գորգերի հավաքածուի համալրման հիմնական խոչընդոտը պահպանվածների չափազանց սակավաթիվ լինելն է:

Թանգարանում պահվում են նաև ինչպես խորհրդային, այնպես էլ նոր ժամանակների հորեյանական ձեռագործ գորգեր, որոնք նույնպես պատմական արժեք են ներկայացնում:

Ներկա դրությամբ թանգարանի մշտական ցուցադրության մեջ ներառված են ընդամենը ութ գորգեր, որոնց հետ նաև կարպետներ, մաֆրաշներ, խուրջիներ, աղաման: Չնայած քաղաքական պատճառներով պարտադրվող խոչընդոտներին, այնուհանդերձ հաջողվել է նաև թանգարանի գորգերը ներկայացնել արտասահմանյան ցուցահանդեսներում: 1997 թվականին Ֆրանսիայի Փարիզ, Մարսել և Լիոն քաղաքներում կազմակերպվել են «Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերը» ցուցահանդեսները, որոնց վերաբերյալ եղել են մի շարք հրապարակումներ տեղի մամուլում: Թանգարանի գորգերի ու կարպետների հավաքածուի ցուցահանդեսներ տարբեր առիթներով կազմակերպվել են նաև հենց թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների համապատասխան սրահում, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի պալատում, Ամարասի վանքում՝ կապված Ս.Մաշտոցի կողմից գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարության հետ և այլն:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերի ու կարպետների ամբողջական հավաքածուն ներկա դրությամբ ներկայացնում է Արցախի բազմադարյան պատմամշակութային ժառանգության կարևորագույն ուղղություններից մեկը՝ գորգագործական արվեստը՝ հայկական գորգարվեստի համակարգում ունեցած իր տիպաբանական առանձնահատկություններով ու ընդհանրություններով հանդերձ:

**Մելանյա Բալայան**

*Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*



Армянские и иностранные древнейшие источники однозначно свидетельствуют о том, что Арцах был включен в состав Великой Армении с древнейших времен. Определяя границы Великой Армении, и греческие, и римские историки свидетельствуют о том, что восточные границы Армении проходили через реку Кура. Одним из заслуживающих доверия документов, подтверждающих этот факт, является сохранившаяся в Риме со времен Нерона выгравированная на стене мраморная карта мира, где Арцах рассматривается в качестве одной из провинций армянского государства. Этот факт подтверждает также греческий географ Страбон (1 в до н.э.-1 в н.э.), отмечавший, что река Кура, протекая через северную границу Армении, отделяет от нее Албанию. Он свидетельствует также о том, что «Орхистена» (Арцах) и Шакашен (Утик) являлись провинциями Армении<sup>19</sup>. Свидетельства Страбона подтверждаются армянскими источниками разных времен. Так, согласно «Ашхарацуицу», общеизвестному труду 5-ого века, Арцах являлся провинцией Великой Армении и состоял из 12 гаваров (областей). В свою очередь Мовсес Хоренаци, указывая на происхождение армянского народа и объясняя этимологию названий отдельных провинций, подробно изложил факт о назначении Арана - одного из наследников Сисака - внука легендарного праотца Айка - правителем на территории, находящейся между реками Кура и Аракс. Тем самым Аран унаследовал «долинную Албанию и ее горную часть, начиная с реки Аракс до местности, что зовется Хнаракерт», границы этой местности простирались на севере до реки Кура, на северо-западе – до замка Хнаракерт, на северо-востоке границей была река Аракс, а на западе – на линии соприкосновения с Сюником – горы Арцаха и Севана. Территория представляла собой треугольник, который включал в себя провинции Арцах и Утик.

Исторические и археологические факты подтверждаются и антропологическими данными. В. Бунак в своей знаменитой работе «Антропологический состав населения Кавказа» в результате сопоставления многочисленных источников пришел к выводу о том, что армяне Арцаха являются самыми яркими представителями антропологического типа «арменоид», принадлежащего к индоевропейской языковой ветви<sup>20</sup>.

Известный археолог Р. Вирхов, изучив результаты исследования археологической коллекции, обнаруженной на территории Арцаха немецким ученым Э. Реслером, писал: «Характерным и крайне важным является общий тип, а до сегодняшнего дня проведенные даже немногочисленные раскопки свидетельствуют о том, что народы, проживавшие на

<sup>19</sup> Страбон, География, М., 1964, XI, XIV.

<sup>20</sup> В.В. Бунак, Антропологический состав населения Кавказа, Вестник гос. музея Грузии, т. 13А, 1946, стр. 94.



территории с Гугарка до долины реки Тартар, являлись представителями одной культуры”<sup>21</sup>. Археолог А. Израелян после детальных исследований, относящихся, в частности к гробницам эпохи бронзового века и материалам, сохранившимся в них, отмечает, что вероисповедания и обряды народов, проживающих на территории армянского нагорья, в том числе и на территории Нагорного Карабаха, были идентичными<sup>22</sup>.

Таким образом, можно говорить о многочисленных фактах, являющихся доказательством того, что на армянском нагорье, в том числе и в Арцахе с незапамятных времен проживали предки армян, имеющие индоевропейские корни, которые и создали своеобразную культуру, основную часть которой составляет прикладное искусство. Одним из направлений этого искусства, которое представляет особый интерес, было широко распространенное в Арцахе с античных времен ковроткачество. Об этом довольно выразительно сообщает историк 7-ого века Мовсес Каланкатуаци. Описывая трагическую смерть албанского князя (“ишхана”) Дживаншира, погибшего от руки сына одного из арцахских князей в 683 г. в городе Партав армянской Албании (на тот период времени являющийся княжеской резиденцией), историк отмечает, что войска Дживаншира, преследующие убийцу, добрались до его дворца в Арцахе и ограбили его, взяв с собой “шелковые парчи, разноцветные паласы (каперты), золото и серебро, отборную мебель и посуду”<sup>23</sup>.

Данное свидетельство М. Каланкатуаци примечательно и важно еще и потому, что почти все исследователи ковроткачества сходятся во мнении о том, что слово “каперт” впервые упоминается в армянских источниках, причем именно в данном варианте. В качестве источника они приводят “Библию”, переведенную на армянский язык в 5-м веке. Позже слово “каперт” во второй раз встречается два века спустя - в 7-ом веке - у М. Каланкатуаци. Из упомянутого историком выражения “разноцветные каперты” можно заключить, что “каперты” уже в 7-ом веке были широко распространены также в Арцахе и Утике.

Слово “каперт”, по мнению исследователей, произошло от слова “кап” (“узел”), вследствие чего первоначально употреблялся именно вариант “каперт” - факт, который также подтверждается М.Каланкатуаци. Впоследствии более благозвучным стал вариант “карпет”, перешедший в европейские языки.

Из армянских летописцев 13-ого века Киракос Гандзакечи с особым восхищением описал ручную работу армянских женщин вообще, называя ее “искусством ткачества и совершенством в изображении”<sup>24</sup>. Подобная оценка историка относится именно к рукодельному искусству Арцаха. Описывая факт строительства известной церкви Гетика при содействии князя Атерка Вахтанга из Арцаха, историк также засвидетельствовал, что жена этого самого Вахтанга, Арзухатун, очень помогла [церкви]: сделала вместе с дочерьми своими из очень мягкой, выкрашенной в различные цвета козьей шерсти прекрасный, всем на диво, занавес-покрыв для святого алтарного возвышения, украшенный приводившими всех в восхищение накладными узорами и вышитыми изображениями, которые представляли страсти Господни и иных святых...”<sup>25</sup>.

Многочисленные свидетельства о мастерстве и большом вкусе армянских женщин Арцаха сохранились и в народных устных сказаниях и легендах. Сказка Газароса Агаяна “Анаит”, героями которой являются Анаит и Вачаган, свидетельствует о глубоких корнях искусств и ремесел в Арцахе. В дочку пастуха одного из примечательных селений Арцаха - села Хаци - влюбляется царь Армянской Албании - Вачаган, который, однако, получает отказ по той причине, что не владеет никаким ремеслом. “Ремесло - это то, чем каждый человек должен

<sup>21</sup> Р. Вирхов, Место Кавказа в истории цивилизации, “Азгагракан андес”, 1895, стр. 66.

<sup>22</sup> А. Израелян, Культура и вероисповедания в Армении в период позднего бронзового века, Ер., 1976, стр. 36.

<sup>23</sup> М. Каланкатуаци, История страны Алуанк, Ер., 1969г., стр. 175.

<sup>24</sup> Киракос Гандзакечи, История Армении, Ер., 1982, стр. 157.

<sup>25</sup> Там же.



владеть, будь он слугой или владыкой, или царем, или князем”, – заключает великий писатель в своей сказке. И почитаемый народом царь учится искусству создания парчи.

На территории исторической Армении были найдены фрагменты ковроткачества, относящихся к древнейшим временам, украшенные различными рисунками. На территории Арцаха были также обнаружены древнейшие ткацкие инструменты – ктутичи, сделанные из кости. Они свидетельствуют о существовании текстильного искусства, в частности, ковроткачества с древнейших времен и в Армении, и в Арцахе. По мнению археологов, эти ктутичи относятся к 2-1 тысячелетиям до н.э.

Начиная со средневековья ковроткачество перешло на новый этап развития, что определяется как качеством рукоделия, так и разнообразием и совершенством орнаментов. Примечателен также тот факт, что в сохранившихся армянских настенных надписях самое раннее упоминание о ковре встречается именно в восточных краях Армении. В частности, о “ковре” есть упоминание в настенной надписи 1242-43гг. церкви Каптаванк области Тавуш, которая прежде была включена в состав провинции Утик восточных краев Армении (большая часть области Тавуш провинции Утик Великой Армении, включая старый армянский населенный пункт Тауш, переименованный турками в “Тоуз”, сегодня оккупирована Азербайджаном – М.Б.). По мнению некоторых исследователей, это первое упоминание названия “ковер”<sup>26</sup>. Стоит также отметить, что начиная с 5-го века древнеармянские провинции Арцах и Утик выступают как единое целое. Причинами этого послужили политические, этнические и религиозные факторы.

